ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների դոկտոր

ԶԱՐՄԱՆՔ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԼԵԶՎԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն հոդվածը անդրադառնում է զարմանք արտահայտող լեզվամիավորների իմաստային կառուցվածքի առանձնահատկությունների խնդիրներին: Բաղադրիչային վերլուծության արդյունքում պարզվում է, որ տվյալ բառույթների իմաստային բովանդակությանը հատուկ են չեզոք, թույլ, ուժգին, հաճելի և տհաճ զարմանքի բնորոշումները:

Հիմնաբառեր. *զարմանք, իմաստային կառուցվածք, բաղադրիչային վերլուծություն, նախատիպային իմաստույթներ, տարբերակային իմաստույթներ*

JEL: Y8, Y9, Z19

Հայտնի է, որ հույզերը և զգացումները մեծ դեր ունեն անհատի կյանքում: Մենք կազմակերպում ենք մեր կյանքը՝ փորձելով, որքան հնարավոր է, զերծ մնալ բացասական զգացողություններից, ինչպես նաև հնարավորինս մեծացնել դրական լիցքերի ազդեցությունը: Ըստ Ս. Թոմքինսի՝ հույզերն են կառավարում մեր կայացրած բոլոր կարևոր որոշումները[1]:

[1] Տե՛ս **Tomkins S.,** Exploring affect: the selected writings of Silvan S. Tomkins. Cambridge University Press, 1995:

Հոգեբանները փորձել են դասակարգել կարևորագույն հույզերը, որի համար նախ անհրաժեշտ էր ճշգրտել հույզերի քանակը, որ մարդն իրականում կարող է ունենալ: Առաջնային հույզերն այն նախնական զգացմունքներն են, որ մարդիկ ունենում են որևէ դեպքի կամ իրադարձության ժամանակ: Ավելի ուշ այս հույզերը քողարկվում են երկրորդային հույզերով, որոնց վերապրումը ավելի խորն է լինում: Գոյություն ունեն նաև երրորդային հույզեր, որոնք կարող են ուժգնացնել առաջնային և երկրորդային հույզերը[2]:

Ս. Թոմքինսն առաջարկում է հույզերի 8 հիմնական տիպեր. հետաքրքրություն, զարմանք, հաճույք, վիշտ, վախ, ամոթ, արհամարհանք և բարկություն: Ըստ հոգեբանի՝ սրանք բնածին են և ունեն ֆիզիկական դրսևորումներ. օրինակ՝ դեմքի արտահայտության փոփոխությունները[3]:

Տարբեր մշակույթների բազմաթիվ հետազոտությունների հիման վրա Փ. Էքմանը առաջարկում է հիմնական հույզերի իր ցանկը: Ուսումնասիրության ընթացքում նա նկարագրում էր իրավիճակը և ակնկալում մարդկանց դեմքի համապատասխան արտահայտություն: Հարցվողներին ցուցադրվում էին նաև դիմային տարբեր արտահայտություններով լուսանկարներ, և նրանք պետք է նկարագրեին դրանց բնորոշ հույզերը: Այս ուսումնասիրությունների հիման վրա Փ. Էքմանը եզրակացրեց, որ մարդիկ ունակ են դեմքի ավելի քան 7000 արտահայտություն ունենալ: Նա առանձնացրեց հույզերի 6 հիմնական տեսակ՝ բարկություն, զզվանք, վախ, ուրախություն, տխրություն, զարմանք[4]:

Ըստ Ք. Իզարդի՝ գոյություն ունեն 10 հիմնական հույզեր: Ուրախությունը զուգորդվում է վստահության և սիրված լինելու գիտակցման հետ: Զարմանքը շարունակական հույզերի ճանաչումն է. սա այն հուզական դաշտն է, որտեղ մարդն անակնկալ վերաբերմունք է արտահայտում իր ապրած հանկարծակի փոփոխության նկատմամբ: Վիշտը ստիպում է պատասխանատվության զգացում ունենալ աշխարհում գոյություն ունեցող խնդիրների նկատմամբ: Բարկությունը կարող է ագրեսիվ վարքագծի դրսևորման պատճառ դառնալ, բայց դա կարող է ունենալ նաև հարմարվելու հատկություն՝ որպես ուժեղության և խիզախության արդյունք, հատկապես երբ անհրաժեշտություն է առաջանում պաշտպանելու սեփական արժանապատվությունը: Գարշանքը կարող է ստեղծել բարկության և հուզականության վտանգավոր խառնուրդ, բայց կարող է նաև խթան հանդիսանալ՝ պահպանելու այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են հիգիենայի կանոններին հետևելը, բնապահպանական խնդիրների նկատմամբ ավելի սրտացավ վերաբերմունքը: Արհամարհանքը կարող է հասցնել ոտնահարման, որևէ վնասի, մինչև անգամ սառնարյուն սպանության: Վախը դրդում է մարդկանց խուսափելու վտանգավոր իրավիճակներից: Ամոթը կարող է առաջացնել անպատեհություն և մեկուսացում, բայց ամոթից խուսափելը կարող է նպաստել ինքնակառավարման գործունեության բարելավմանը: Մեղքը կարող է իշխել և տվայտել ուղեղը, բայց մեղքից խուսափելու ջանքերը կարող են զարգացնել անձի պատասխանատվության զգացումը[5]:

Այսպիսով՝ վերը նշված դասակարգումներից կարելի է եզրակացնել, որ զարմանքը դասվում է հիմնական հույզերի ցանկում: Մենք բոլորս էլ մեր

---

[2] Տե՛ս **Plutchik R.,** Emotions. New York, 1980, էջ 12:

[3] Տե՛ս **Tomkins S.,** The quest for primary motives: Biography and autobiography of an idea. Journal of Personality and Social Psychology, vol. 41(2), 1981:

[4] Տե՛ս **Ekman P., Friesen W.V., Ellsworth P.,** Emotion in the Human Face. Pergamon Press, 1972:

[5] Տե՛ս **Izard C. E.,** The psychology of emotions. New York, 2004, էջ 25–26:

կյանքի ընթացքում ժամանակ առ ժամանակ ապրում ենք զարմանքի պահեր: Զարմանքի սկզբնական արձագանքը և զգացմունքը կարող են տևել վայրկյաններ, սակայն դա կարող է առաջացնել այլ հույզեր՝ կախված իրավիճակից: Երկրորդային հույզերը, որոնք կարող են առաջանալ զարմանքից, ներառում են.

- Վախ, եթե զարմանքի առաջացման պատճառը բացասական բնույթ է կրում, օրինակ՝ աշխատանքի հանկարծակի կորուստը կամ պատահարը:
- Բարկություն, որն ավելի տևական է, քան վախը:
- Շփոթմունք. այս զգացումը կարող է առաջանալ, երբ զարմանքը լավ կամ վատ դեպքի հետևանք է: Շփոթմունքը հաճախ անմիջական արձագանք է, բայց կարող է դանդաղել, երբ մարդը չի հասկանում, թե ինչ է տեղի ունեցել և ինչու:
- Ուրախություն, որն, անշուշտ, առաջանում է դրական հույզերից, ինչպիսին է երեխայի ծնունդը, աշխատանքում առաջխաղացումը կամ ֆինանսական անսպասելի հաջողությունը:

Զարմանքին վերաբերող հիմնական ֆիզիկական արձագանքները մեր վերահսկողությունից դուրս են: Երբ զարմանում ենք, մենք իրականում ժամանակ չենք ունենում մտածելու, թե ինչպես վարվել, կամ թե ինչպիսի տեսք ենք ունենում այդ պահին: Զարմանքը սովորաբար զուգակցվում է հետևյալ ինքնաբերաբար ստացվող դրսևորումներով՝ բացված բերան, լայն բացված աչքեր, բարձրացրած հոնքեր, կնճռոտած ճակատ (որն արտահայտում է նաև զարմանք), սուր ճիչ (նաև վախի արտահայտություն), ցատկ, դող կամ ցնցում:

Դրական զարմանքը հիասքանչ ապրում է: Այն կարող է ուրախության, անկեղծ գոհունակության արդյունք լինել, դրական կերպով ազդել մարդու հոգեվիճակի, վստահության կամ ինքնագնահատականի վրա: Զարմանքի վիճակը ավելի քիչ լարված կամ կարճատև է, ահա թե ինչու է արագ վերածվում տարբեր վիճակների: Զարմանքի պահին դրան անպատրաստ մարդն ունենում է անհանգստության, կասկածամտության, ապակողմնորոշման, անտեղյակության զգացում և այլն: Ավելին, բացասական իրավիճակներում զարմանքը կարող է պատճառ դառնալ այնպիսի հույզերի, ինչպիսիք են բարկությունը կամ վախը, նաև առաջացնել ֆիզիկական և հուզական խնդիրներ: Բացասական զարմանքը կարող է հանգեցնել ցածր ինքնագնահատականի, ախորժակի անկման և ընկճախտի:

Զարմանքն, անշուշտ, ունի հուզմունքին բնորոշ գծեր, բայց այն փոքրինչ այլ իմաստային երանգներ է ստանում: Ի տարբերություն այլ հույզերի, զարմանքը կարճատև վիճակ է: Այն չեզոք վիճակից կտրուկ, հանկարծակի, չսպասված իրադրության արդյունք է: Զարմանքը բոլոր հույզերից ամենակարճն է, որի տևողությունը ընդամենը մի քանի վայրկյան է, որից հետո մենք կենտրոնանում ենք այն փաստի վրա, թե ինչ է իրականում տեղի ունենում: Զարմանքը միաձուլվում է այլ հույզերի հետ՝ կախված այն բանից, թե ինչն էր, որ զարմացրեց մեզ, կամ էլ դա չի զուգորդվի որևէ հույզի հետ, եթե մենք որոշենք, որ զարմացնող դեպքը որևէ հետևանք չի կարող ունենալ:

Այսպիսով՝ փորձենք ձևավորել «զարմանք» հույզի լեզվականացման միջոցները: Նախևառաջ, իրականացնելով սահմանումային վերլուծություն, որը հիմնված է բառարաններում տրված համապատասխան լեզվամիավոր-

ների սահմանումների վրա, մի շարք բացատրական բառարաններից կատարվել է համապատասխան լեզվամիավորների ընտրություն, որոնց սահմանումները լրացվել և ստուգվել են նաև հոմանիշների բառարաններով[6]: Հետազոտության այս փուլում որոշված էր, որ բառարանային սահմանումը վկայում է «զարմանք» իմաստի առկայության մասին այն դեպքում, եթե ներառում է surprise նշանակության ցուցիչը կամ դրա հոմանիշները՝ amazement, astonishment, wonder:

Արդյունքում՝ առանձնացվել են զարմանք արտահայտող հետևյալ գոյականները.

1. surprise – a feeling or condition of being **surprised, astonished** caused by something happening *suddenly* or *unexpectedly*
2. amazement - the feeling that accompanies something *extremely* **surprising**
3. astonishment – a feeling of *very great* **surprise**
4. astoundment - the feeling or condition of being *greatly* **surprised**
5. consternation – a *worried, sad* feeling after you have received an *unpleasant* **surprise**
6. dismay – a feeling of apprehension or alarm after you have received an *unpleasant* **surprise**
7. disbelief - the feeling of *not being able* to believe something, **amazement**; **astonishment**
8. stupefaction - a feeling of *stupefied* **astonishment**; the feeling of distress and disbelief that you have when something *bad* happens accidentally
9. shock – a *strong* feeling of **surprise**, especially something *unpleasant*
10. dumbfoundment (dumbfounderment) – a state of being speechless with **astonishment** and **amazement**
11. stupor – a state in which one is *unable* to think, hear, etc. clearly, because he/she had been **surprised** or shocked
12. blow - a state or feeling of *deep* distress or misery because of a sudden *unpleasant* **surprise,** disaster or misfortune
13. wonder - the feeling excited by something *strange*; a mixture of **surprise**, curiosity, and sometimes awe
14. awe – a mixed emotion of reverence, respect, dread, and **wonder** inspired by authority, genius, great beauty, sublimity, or might; *overwhelming* **wonder**, admiration, respect, or dread
15. marvel - to be filled with an *admirable* **surprise** or wonder
16. wonderment – a feeling of *pleasant, rapt* **surprise** when you see or experience something beautiful, unusual or unexpected
17. admiration - *pleasurable* contemplation or **surprise**
18. startle – a *sudden* shock or **surprise**
19. daze – a confused state of shock and **amazement**

---

[6] Վերլուծության համար օգտագործվել են հետևյալ բառարանների տվյալները՝ 1) Cambridge Advanced Learner's Dictionary. Cambridge University Press, 2005. 2) Collins Cobuild English Dictionary. GB., Harper Collins Publishers, 1998. 3) Merriam–Webster's New Dictionary of Synonyms. USA, Merriam Company Publisher, 1978. 4) Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Oxford, N.Y., Oxford University Press, 2009. 5) Random House Unabridged Dictionary. N.Y., Random House, 1993. 6) www.oxforddictionaries.com 7) www.thefree dictionary.com:

Զարմանք արտահայտող լեզվամիավորների բառարանային սահմանումներից կարելի պատկերացում կազմել տվյալ հույզի գոյաբանական կառուցվածքի մասին՝ թե ինչ տարրեր է պարունակում, ինչպիսի բնորոշումներ է ստանում: Զարմանքը նկարագրվում է՝

- Իրավիճակի անսպասելիությամբ, որը բնութագրվում է *չսպասված* /unexpected/ ածականով:
- Արտասովորությամբ, որն արտահայտվում է այնպիսի միավորներով, ինչպիսիք են՝ *անծանոթ, անսովոր, նոր, անհայտ, արտակարգ* /unusual, novel, new, unfamiliar, extraordinary/:
- Անհասկանալիությամբ, որը մատնանշվում է *անբացատրելի, անհաշվելի* /inexplicable, uncountable/ տարրերի կիրառմամբ:
- Տարօրինակությամբ, որը բառարաններում ներկայացվում է այնպիսի արտահայտություններով, ինչպիսիք են զգացողության բացակայությունը, հոգեբանական շփոթմունքը, հավատալու անկարողությունը կամ ցանկության պակասը, վերին աստիճանի շփոթվածությունը /lack of sensation, mental confusion, unable or unwilling to believe, utter perplexity/:

«Զարմանք» հասկացության իմաստային պատկերն ամբողջական դարձնելու համար կիրառել ենք բաղադրիչային վերլուծության մեթոդը /componential analysis/, որը թույլ է տալիս տրոհել բառիմաստի տարրերը մանրագույն բաղադրիչների՝ իմաստույթների, կատարել ենք վերոնշյալ լեզվամիավորների իմաստային կառուցվածքի հատկանիշների վերհանում[7]: Վերլուծության արդյունավետության նկատառումներից ելնելով՝ իմաստույթների վերհանման գործընթացում վերստուգել և անհրաժեշտության դեպքում լրացրել եք բառարանային սահմանումները՝ հիմնվելով տարբեր բացատրական բառարանների տվյալների վրա: Ինչպես հայտնի է, բառերի իմաստույթային կազմում առաջին հերթին առանձնանում է նախատիպային իմաստույթը՝ բուն իմաստի ընդհանուր իմաստույթը, որը, մեր դեպքում, «զարմանք» նախատիպային իմաստույթն է: Այնուհետև որոշարկվում են տեսակային նշանակության տարբերակիչ /դիֆերենցիալ/ իմաստույթները, որոնք զարմանք արտահայտող լեզվամիավորների դեպքում հետևյալն են՝

1. Չեզոք. այս իմաստույթը բացահայտում է զարմանքի վիճակը, երբ զգացումն այնքան էլ ուժեղ և վառ չէ:
2. Ուժգին. ցույց է տալիս անսահման մեծ զարմանք:
3. Թույլ. այս իմաստույթը սահմանում է զարմանքի այնպիսի վիճակ, երբ այն ամենաթույլ մակարդակում է:
4. Հաճելի. սա ցույց է տալիս դրական և դուրեկան զարմանք:
5. Տհաճ. ցույց է տալիս այնպիսի վիճակ, երբ զարմանքը շփոթեցնող կամ նույնիսկ նյարդայնացնող է:

Վերը նշված տարբերակների իմաստային կառուցվածքի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ հետևյալ իմաստույթներն են առկա այս լեզվամիավորներում. surprise – չեզոք, տհաճ, հաճելի, amazement – ուժգին, տհաճ, հաճելի astonishment – ուժգին, տհաճ, astoundment – ուժգին, տհաճ, consternation – ուժգին, տհաճ, dismay – ուժգին, տհաճ, disbelief –տհաճ, չեզոք, stupefaction – ուժգին, տհաճ, shock – ուժգին, տհաճ, dumbfoundment – ուժգին, տհաճ, stupor – ուժգին, տհաճ, blow – ուժգին, տհաճ, wonder –

[7] Տե՛ս **Katz J., Fodor J.,** The structure of semantic theory // Language, 30, 1963, էջ 170–210:

չեզոք, տհաճ, հաճելի, awe – ուժգին, տհաճ, հաճելի, թույլ, marvel – ուժգին, հաճելի, wonderment – ուժգին, հաճելի, admiration – ուժգին, թույլ, startle – ուժգին, տհաճ, թույլ, daze – ուժգին, տհաճ:

Այսպիսով՝ «զարմանքի» իմաստային դաշտի շրջանակներում բոլոր լեզվամիավորներն ունեն «զարմանք» նախատիպային իմաստությունը և համապատասխան տարբերակիչ իմաստությունները: Surprise լեզվամիավորը ունի միայն մի քանի հոմանիշներ, որոնք ցուցանշում են հաճելի զարմանք՝ admiration, wonderment, marvel, wonder: Ըստ բառարանային սահմանումների՝ մենք չենք կարող կռահել այս լեզվամիավորներով արտահայտված զարմանքի ուժգնությունը: Այն կարող է պայմանավորված լինել խոսողի հուզական վիճակի աստիճանով կամ բնույթով: Այս գոյականների բառարանային սահմանումներում տարբեր ածականներ են օգտագործվում դրանց ուժգնությունը ցույց տալու համար, քանի որ իրենք իրենցով դա չեն կարող բացահայտել: Այդ դեպքում բավականին դժվար է վերլուծել՝ արդյոք owe բառը հաճելի, թե տհաճ զգացում է: Երբեմն այն ունի վախի, սարսափի, երբեմն ակնածանքի, հարգանքի, հպարտության, հեղինակության, հանճարեղության տարրեր:

Ինչպես տեսնում ենք, amazement և astonishment լեզվամիավորներն ունեն surprise և wonder բառերի բոլոր իմաստային առանձնահատկությունները: Փաստորեն, amazement գոյականը համապատասխանում է դրանց իմաստային առումով, բայց ունի ուժգնության ավելի բարձր աստիճան: Ուժեղ, ծայրահեղ, ամբողջական, մեծ, անհաշիվ /strong, extreme, complete, great, overwhelming/ ածականները զարմանքի ուժգնությունն ընդգծող իմաստություններ են:

Astoundment, amazement, shock բառույթների բառարանային սահմանումներում հանդիպում ենք այնպիսի լեզվամիավորների, ինչպիսիք են՝ անհանգստություն, կասկածամտություն, անհավատություն, անհնարինություն, անհավանականություն /perturbation, incredulity, disbelief, impossibility, improbability/, որոնք արտահայտում են տվայտանք և անհանգստություն: Այս ցուցիչները հանդես են գալիս որպես consternation, dismay, disbelief, blow բառույթներին բնորոշ հատկանիշներ, որոնք astoundment, amazement և shock բառերից տարբերվում են միայն ցածր ուժգնությամբ և երկար տևողությամբ:

Astonishment լեզվամիավորը համընկնում է surprise բառի հետ իմաստային առումով, որը բառարաններում սահմանվում է որպես ծայրահեղ մեծ զարմանք: Չնայած իր կարճատև բնույթին, զարմանքն իր անսպասելիությամբ մարդու մեջ արթնացնում է լարվածություն, անհանգստություն, հուզմունք, որն ընկճում է անհատին, և այս ամենը հանգեցնում է ուղեղի համակարգի և խոսքային գործառույթի խաթարմանը:

Stupefaction, terror, stupor, dumbfoundment, astonishment բառերը ցույց են տալիս վերլուծվող հուզական դաշտի հնարավոր ամենաբարձր աստիճանը: Այս գոյականների բառարանային սահմանումներում *վախ* /fear/ լեզվամիավորի առկայությունը ցույց է տալիս այս բառույթներով արտահայտված հույզերի անորոշությունը:

Վերլուծության արդյունքները ամփոփված են հետևյալ աղյուսակում.

Լեզվամիավորներ	Իմաստույթներ				
	Ուժգին	Թույլ	Չեզոք	Հաճելի	Տհաճ
Surprise	-	-	+	+	+
Amazement	+	-	-	+	+
Astonishment	+	-	-	-	+
Astoundment	+	-	-	-	+
Consternation	+	-	-	-	+
Dismay	+	-	-	-	+
Disbelief	-	-	+	-	+
Stupefaction	+	-	-	-	+
Shock	+	-	-	-	+
Dumbfoundment	+	-	-	-	+
Stupor	+	-	-	-	+
Blow	+	-	-	-	+
Wonder	-	-	+	+	+
Awe	+	-	-	+	+
Marvel	+	-	-	+	-
Wonderment	+	-	-	+	-
Admiration	-	+	-	+	-
Startle	+	+	-	-	+
Daze	+	-	-	-	+

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ «զարմանք» հույզը կարող է իր արտահայտությունը գտնել մի շարք լեզվամիավորներում, որոնց բառարանային սահմանումները ցուցանշում են զարմանքի տարբեր դրսևորումներ: Առանձնացնելով «զարմանք» հասկացության հոմանիշների մի խումբ՝ մենք տարբերակեցինք համապատասխան իմաստությունները՝ ցույց տալով զարմանքի առաջացման պատճառն ու ծագումը. տարօրինակ, խորհրդավոր, չսպասված, հանկարծակի, շփոթեցնող և այլն: Տվյալ լեզվամիավորների իմաստային կառուցվածքի առանձնահատկությունների վերլուծությամբ պարզել, որ զարմանքին հատուկ են չեզոք, ուժգին, թույլ, հաճելի կամ տհաճ բնորոշումները:

Օգտագործված գրականություն

1. Tomkins S., Exploring affect: the selected writings of Silvan S. Tomkins. Cambridge University Press, 1995.
2. Plutchik R., Emotions. New York, 1980.
3. Tomkins S., The quest for primary motives: Biography and autobiography of an idea. Journal of Personality and Social Psychology, Vol 41(2), 1981.
4. Ekman P., Friesen W.V., Ellsworth P., Emotion in the Human Face. Pergamon Press, 1972.
5. Izard C. E., The psychology of emotions. New York, 2004.
6. Cambridge Advanced Learner's Dictionary. Cambridge University Press, 2005.
7. Collins Cobuild English Dictionary. GB., Harper Collins Publishers, 1998.
8. Merriam–Webster's New Dictionary of Synonyms. USA, Merriam Company Publisher, 1978.
9. Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Oxford, N.Y., Oxford University Press, 2009.
10. Random House Unabridged Dictionary. N.Y., Random House, 1993.
11. Katz J., Fodor J., The structure of semantic theory // Language, 30, 1963.
12. www.oxforddictionaries.com
13. www.thefree dictionary.com

АРМИНЕ ГРИГОРЯН
Доцент кафедры языков АГЭУ,
кандидат филологических наук

ЛУСИНЕ АРУТЮНЯН
Доцент кафедры языков АГЭУ,
доктор филологических наук

Особенности семантической структуры лексических единиц, выражающих удивление.– Эмоции, как особый класс субъективных психологических состояний, отражают субъективное оценочное отношение к существующим или возможным ситуациям или поведению. Они включены во все психические процессы и состояния человека. В данной статье делается попытка классификации лексических средств репрезентации эмоции "удивление" в английском языке. Как показывает исследование, семантическая структура существительных, номинирующих эмоцию "удивление", характеризуется семами, выражающими нейтральное, слабое, сильное, приятное и неприятное удивление.

Ключевые слова: *удивление, семантическая структура, компонентный анализ, архисема, дифференциальные семы.*
JEL: Y8, Y9, Z19

ARMINE GRIGORYAN
Associate Professor at the Chair of Languages at ASUE,
PhD in Philology

LUSINE HARUTYUNYAN
Associate Professor at the Chair of Languages at ASUE,
Doctor of Philology

Peculiarities of the Semantic Structure of Lexical Units Expressing Surprise.– No activity of human life is performed without emotions being involved. Whatever we do is pervaded with the elaborations of emotional experiences of some kind. The present paper considers the basic characteristic features of semantic structure of words representing the emotion “surprise”. The analysis has shown that neutral, weak, intense, as well as pleasant and unpleasant semes are inherent in this type of lexical units.

Key words: *surprise, semantic structure, componential analysis, archetypal semes, differentiating semes.*
JEL: Y8, Y9, Z19